

Ա Ի Զ Ա Տ

ԻԶ

Լսելեաց գործարանը :

Եթէ բարձրագոյն կարգերու կենդանեաց ուշ դնելու ըլլանք, անոնց աչքերուն ձեին ու կազմութեանը մէջ այն շափ տարբերութիւններ չենք տեսնար՝ որչափ է անոնց ականջներուն պէսպիսութիւնը : Աչքերը գրեթէ միշտ զիխոյն մի և նոյն տեղւոյն վրայ զետեղուած են . և թափանցիկ մարմնէ մը կը բաղկանան՝ քիչ շատ պարզ կազմութեամբ, որն որ ջղային յաւելուած մ'ունի առարկայից պատկերն ընդունելու :

Սակայն ականջաց վրայ այս պարզութիւնը չենք գտներ. վասն զի թէ պէտ և իրենց զետեղուած տեղը միշտ, աչաց պէս՝ նոյն է, բայց իրենց ձեր շատ տարբեր է : Ականջին բացուածքը՝ օրինակի համար, զարմանալի կերպով մը յարմարցուած է :

Ահա բուն՝ որ ծառի մը վրայ հանդշած ուշադրութեամբ որսի մը կը սպասէ որ վարէն անցնի, ականջն որ տեսնես՝ վերէն շատ աւելի երկնցած ու դուրս ելած է քան վարէն . որպէս զի նուազագոյն ձայնն ալ չկարենայ կորսնցնել :

Աղուէսը, որուն արուեստն է վարէն որսին բոյնը լրտեսել, ականջն ալ դէպ'ի վար ու դուրս տնկուած է :

Գարշահոտը, որովհետև միշտ դիմացէն որսին կը սպասէ, անոր համար ալ ականջը դէպ'ի ետեւը ուղղուած է, որ դիմացէն եկող ձայնը կարենայ ընդունիլ :

Իսկ երկշուտ նապաստակն որ արագ է լսելուն, և որուն մէկ հատիկ հոգը և մտածութիւնը թշնամիի ձեռք չիյնալն է, ականջին կազմութիւնն ալ ուկրուտ խողովակ մ'ունի իբր յաւելմունք, որ անանկ դէպ'ի ետեւ ձգուած է որ հեռաւոր և ամենացած ձայնն ալ որ ետեւէն կու գայ՝ կարենայ ընդունիլ :

Սոյնպէս նաև բարակ՝ որսական շան,

Խողին և ուրիշ կենդանեաց, որոնք շատ ցած ձայններ լսելու կարողութիւն ունին, արտաքին ականջը կամ առկախեալ է և կամ շարժուն, որպէս զի գլուխը շարժելու դժուարութեանը փոխարէն մը ըլլայ. վասն զի եթէ ականջնին այս կերպ կազմութիւն չունենար, խողը՝ մինչդեռ տափցած շտապով գետինը կը փորէ արմատներ փնտուելու համար, և որսորդ շունն ալ մինչդեռ յանդզնութեամբ հոտին առաջնորդութեամբը որսին ետևէն կը վազէ, կրնան վտանգի մէջ իյնալ, որուն մերձաւորութիւնը իրենց առկախեալ ականջները մէկէն կ'իմացնեն, իրենց ամփոփելով բոլոր այն ցած ձայններն որ գետնին երեսը տարածուած են :

Արդ միջատաց գալով կը գտնենք որ աչքերնին, բարձրագոյն կենդանեաց հակառակ, ամենամեծ տարբերութիւններ ունին, եթէ ըստ կազմութեան, եթէ ըստ թուոյն և եթէ ըստ դրից, որով գուցէ իրաւապէս կարենանք նոյնանման տարբերութիւններ ենթադրել անոնց ականջաց նկատմամբ : Այս կ'ըսենք ենթադրելով ստոյգ այն կարծիքը, որ այդ էակներուն լսելիքը՝ բողկուկները կը սեպէ : Եթէ ստոյգ լսելիք են, ապա յիշաւի անոնց ցցուցած կերպ կերպ շէնքն ալ բազմադիմի է : Բայց ինչպէս՝ ի սկզբան ըսինք, ստոյգ հաստատել չենք կրնար, այլ հաւանական կարծեզք կը զուրցենք, վասն զի բնապատումներէն իսկ ոմն կ'ընդունի և ոմն կը մերժէ :

Արդ ըստ բազում բնապատմից միջատաց բողկուկները՝ կը համապատասխաննեն մեծագոյն կենդանեաց ականջներուն, եթէ ըստ թուոյն, եթէ ըստ դրից և եթէ ըստ կերպին որով ցցուեալ են զիշուն վրայ : Զկայ ուրիշ գործարան մը որ ականջը ներկայացնէ, որով յայտնի կ'երևայ ասկէ որ իրենց նախնական պաշտօնը լսելու կարողութիւնը պիտօր ըլլայ . թէպէտ և ասով ուրիշ երկրորդական պաշտօն մ'ալ ունենալէն չեն զրկուիր . ինչպէս լեզուն, որ թէպէտ և իրեն նախնական պաշտօնը

ճաշակառութիւնն է, բայց հանգերձ այսու նաև իրը շօշափելիք ալ կը ծառայէ : Այս տեսութեամբ բողկուկները կրնան նաև իրը շօշափողք կամ իրը խոնաւաչափ ծառայել, օդուն վիճակը ճանչնալու համար . ինչպէս կը տեսնանք այլ և այլ միջատաց վրայ, որոնք զարմանալի յատկութիւն մ'ունին օդուն փոփոխութիւնները ճանչնալու :

Դիտած են բնապատումք որ այն ձայները որ միջատաց ունակութեանց ու բարուց հետ վերաբերութիւն չունին, ամեննեին աղղեցութիւն ալ չունին վրանին . զանգակի մը հնչելուն՝ ժամացուցի մը զարնելուն, ապակիի մը զարնուելով հնչելուն և կամ ասոնց նման ուրիշ ձայնելուն, ամեննեին լսելու նշան մը չեն տար որչափ որ առարկայն իրենց տեսութենէն դուրս է . բայց տերևի մը ճոճուալուն, կամ ուրիշ միջատի մը ամենաթեթև ընթացքն ալ զիրենք խոռովութեան մէջ կը ձգէ : Տերև մը կամ թղթի կտոր մը ստոլի մը տակէն ճոճուացուր, մէկէն կը տեսնես որ կանաչ մարախը իր երկայն բողկուկներուն մէկը կամ երկուքը կ'երկնցնէ ձայնին եկած ուղղութեամբը : Բզէզ մը նոյն բանը կ'ընէ . և մանաւանդ եթէ ձայնը ետևանց կու գայ, բողկուկը մարմնոյն վրայ պառկեցնելով՝ դէպ'ի ետեր կ'ուղղէ :

Բողկուկները այս կերպ խաղցնելէն կրնանք հետեցնել անոնց լսողական կարողութիւնը : Իսկ անոնց սուր լսողութիւնը եթէ ըստ ամենայնի չէ, գոնեա ըստ մասին պէտք է որ անոնց խիստ երկայն բողկուկներէն կախումն ունենայ . վասն զի դիտողութիւնը կը վկայէ որ այն միջագր որ կարճ բողկուկ ունին, լսողութիւննին ալ ծանր է :

Շօշափելեաց վրայ խօսելով՝ բողկուկները յիշեցինք իրը գործարան շօշափման . բայց մէկ դիտողութիւն մը հակառակ կ'ելլէ այդ կարծիքին, որով բնական կ'երենայ հետեցնել, որ բողկուկները չեն կրնար գործածուել իրը սեփական գործի շօշափելեաց, իրենց մասնաւոր կազմութեանը նայելով : Հա-

սարակ ճանճը օրինակ առնելով, բողկուկները անանկ կարճ են՝ որ անկարելի է որ միջատը կարենայ իրը շօշափելիք գործածել . այսպէս ալ ուրիշ շատ մը բզէզներ : Նաև թերևս շօշափելեաց կարծիքին հակառակ ելլէ այն խնամքն որով բնութիւնը խնամ տարեր է պաշտպանելու այդ գործարանը մէկ քանի տեսակ բզէզներու և ջրային միջատաց վրայ : Կան ջրային միջագր որ զվարուն երկու կողմը ընդունարաններ ունին բողկուկները ընդունելու և ջրէն պահպանելու, և բզէզք դարձեալ որ հանգչած ժամանակնին բողկուկնին երկու կողմը կ'ապահովցնեն . երբ քունէ կ'արթննան, առաջին բանը բողկուկները պարզելն է և անդադար շարժել . հետեաբար ոչ շօշափելու, այլ մտիկ ընելու՝ չըլլայ որ թշնամի մը մօտենայ :

Հապա բողկուկներուն զանազան կերպ կերպ շէնքը ու երկայնութիւնը . անշուշտ մեզի առիթ կու տան անոնց վախճանը գուշակել, ինչպէս ըրինք մէկ քանի բարձրագոյն կենդանեաց վրայ :

Բայց կամաց կամաց գիշերը կը պարզի, արևը միշտ ընթացքը շարունակելով՝ արևելեան հորիզոնին վրայ կարմիր քօղ մը կը ձգէ : Թեթև հովիկ մը արդէն դաշտին երեսը ման կու գայ : Բոյսերը կը սթափին . մեղմիկ մը շարժելով քունը վրաներնէն կը թօթուեն, որպէս թէ պատրաստուելով արևուն երևումը ողջունելու :

Խաւարը կը հալածի . գիշերային էակներն իսկ իրենց մաղձոտ ձայներն կը լռեցնեն . և ամենը իրենց ապաստանարանը սարսափած կը փախչին : Ցորեկուան տէրն է որ կը սկսի ուրախութեան ձայներն լսեցնել :

Դիւրին է արդ լցոս աչքով բողկուկներուն կերպ կերպ շէնքը զննել, բազմաթիւ ենթակայից կենդանի ձեռլնութեամբը :

Հետեւալն ուրիշ անգամ :